

Աշխարհագրություն – 2020թ. մարզային (քաղաքային) փուլ

Պատասխաններ

/ գնահատման քայլը՝ 0,25 միավոր /

9-րդ դասարան

1. Հոսքաքամիներն առաջանում են մայրցամաքի ծայրամասերի և կենտրոնական շրջանների միջև՝ մթնոլորտային ճնշման մեծ տարբերությունների պատճառով: Շրջակա ծովերի մեղմացնող ազդեցության շնորհիվ ծայրամասերում օդի ջերմաստիճանը կենտրոնական շրջանների համեմատ ավելի բարձր է, հետևաբար, ճնշումը՝ ցածր: Կենտրոնական շրջաններում շատ ավելի ցուրտ է, օդը խտանում է և ճնշումը բարձրանում: Մթնոլորտային ճնշումների տարբերությունն էլ ավելի մեծ է ձմռանը, որն էլ դառնում է ուժեղ հոսքաքամիների առաջացման պատճառ:
2. Աքվակուլտուրան ջրավազաններում ջրային արժեքավոր օրգանիզմների (ձկներ, խեցգետնակերպեր, ջրիմուռներ) արհեստական եղանակով բազմացումն է: Դրա անհրաժեշտությունը մեծանում է 2 պատճառով.  
ա) համաշխարհային օվկիանոսի կենսաբանական ռեսուրսները նվազել են ոչ արդյունավետ օգտագործելու հետևանքով,  
բ) աշխարհի մեծաթիվ բնակչության սննդի հարաճուն պահանջները բավարարելու նպատակով:
3. Պարբերաբար տաք ջուր և գոլորշի ժայթքող աղբյուրները կոչվում են գեյզերներ: Դրանք տարածված են Երկրի գործող հրաբխային շրջաններում՝ Իսլանդիայում, Իռլանդիայում, Կամչատկայում, Նոր Զելանդիայում, ԱՄՆ – ում (Հավայան կղզիներ, Ելոսթոունյան պարկ) և այլուր:
4. Շուշի, Մարտակերտ, Ասկերան, Հադրութ, Մարտունի, Քարվաճառ, Բերձոր, Կովսական, Միջնավան:
5. Ձյան գիծը Երկրի մակերևույթի վրա այն սահմանն է, որից բարձր մթնոլորտային պինդ տեղումների կուտակումը գերազանցում է դրանց գոլորշանալուն և հալվելուն: Ձյան գիծը կախված է օդի ջերմաստիճանից և խոնավությունից: Հասարակածային գոտում ձյան գիծը գտնվում է 4500 – 5000 մ բարձրություններում, արևադարձերում՝ 5500 – 6000 մ, Հայկական լեռնաշխարհում՝ 4200 մ, բարեխառն լայնություններում՝ 2000 – 2500 մ, իսկ բևեռամերձ շրջաններում՝ մինչև 0 մ (ծովի մակերևույթին):
6. 4, 2, 1, 3:
7. ա) հարաբերական բարձրությունը՝ 1000 մետր:  
բ) բացարձակ բարձրությունը՝ 3400 մետր:
8. ա) ուրբանիզացման մակարդակը՝ 80 %:  
բ) ծնելիության գործակիցը՝ 15 ‰:
9. 1 – է, 2 – գ, 3 – դ, 4 – բ, 5 – գ, 6 – ը, 7 – է, 8 – ա:
10. 2, 3, 6, 8
11. Պակիստան – սուննիզմ, Եմեն – շիիզմ,  
Չինաստան – դաոսիզմ, Ճապոնիա – սինթոիզմ,
12. 2
13. 4